

ՎԻԵՆԱՅԻ ՄԻԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԱՂԵՄԻ ՅՈՒՇԵՐԷՍ

Աւելի քան երեսնեակ մը առաջ, 1952 թ-ի ամրան, մօտ երեք ամիս երաժշտութեան մայրաքաղաք Վիեննա մնացի: Գացած էի Միխիթարեանց գանձատան Միպիլեանի աշխարհահռչակ հայկական դրամներու հաւաքածոն ուսումնասիրելու եւ ցուցակագրելու համար: Ասիկա գործ մըն էր որ ինձմէ առաջ որեւէ մէկը չէր համարձակած կատարել:

Այդ դրամներուն մէջ գտայ գոյգ մը բազմալեզուան պղինձ դրամներ, հատագրուած Մօնկոլ Ապաղա խանի անունով, որոնց երկրորդ կողմի կեդրոնին փորագրուած էր քառաթեւ խաչ մը, որոնց չորս խորշերուն մէջ ունէին՝ ՏԲ - ԱԾ - ՅՍ - ՔԲ նախադասութիւնը:

Հետաքրքրարժ այդ անտիպ դրամները ուսումնասիրելով, տարի մը ետք, 1953 թ-ին, զանոնք ներկայացուցի Փարիզ գումարուած Միջազգային Դրամագիտական Համագումարի Արեւելագիտական բաժնին: Յետոյ այդ հաղորդագրութիւնը հրատարակուեցաւ համագումարին նուիրուած տեղեկագրութեանց երկրորդ հատորին մէջ, Փարիզ, 1957 թուականին:

Այստեղ եւ բաւական ուշ, կ'ուզէի շնորհակալութեան տուրքս վճարել հայագէտ ու մեր բարեկամ Ս. Տառուէթ-ին, որ բանիւ եւ գործով մեծապէս օգտակար հանդիսացաւ ինձի: Անոր հետ Փարիզէն ճամբայ ելած էինք Վիեննա երթալու համար, միեւնոյն հասցէով, եւ Միխիթարեան վանքի Հայկական դրամները ուսումնասիրելու, ինքը ուսումնասիրելու համար իր թէզին Մ. Կաղանկատցոյ ձեռագրերը: Սակայն Սալգապուրկի մէջ իրեն ըստեցաւ որ չէր կրնար Սովետական գրաւուած հողերուն վրայէն ճամբորդել, Անգլիացի ըլլալուն համար: Վիեննա հասնելու համար հարկ էր որ ուղ-դուէր Փրանսական բանակի գրաւման տակ գտնուող հողամասերէն:

Տառուէթ կը խօսէր նաեւ գերմաներէն, որով մեծապէս օգտակար հանդիսացաւ ինձի: Խնդում եւ կատակասէր տէրվիչ երիտասարդ մըն էր: Երբեմն հայերէն կ'արտայայտուէր ու կը գործածէր ռամիկներու յատուկ բառեր: Այսպէս օր մը, բանալի մը կորսնցուցած ըլլալուն համար, իրարանցուցով մէջ էր: Եւ երբ հարցուցի թէ ու՞ր վերջին անգամ դրած էր, միամտաբար պատասխանեց. «Ճէպս դրած էի»: Հայագէտ, գրականագէտ եւ ձէ՞՞ր բառը որքան կը սագէր իրեն: Աւելցնեմ որ զինք նախապէս ճանչցած էի Լիբանանէն, Չամառու Հայ կաթողիկէ վանքը, ուր նոյնպէս եկած էր քրքրելու հայկական ձեռագրեր ու լուսանկարելու զանոնք:

Այսպէս օրին մէկը, իրեն հաղորդեցի Մօնկոլեան պղինձ դրամներու գիւտիս մասին եւ ըսի, կ'ուզէի ստուգել անոնց պատմական ենթադրեալ պատկանելիութիւնը: Թելադրեց որ գրեմ Բուրն Բոլէճի Փրօֆէսօր Պէյլիին, առնելու համար անոր կարծիքը: Գրեցի Պէյլիին: 12 Օգոստոսին ստացայ պատասխանը: Փրօֆ. Պէյլի կը հաստատէր որ դրամները իսկապէս կը պատկանէին Ապաղա մոնկոլ խանին, եւ թէ այդ կարծիքէն էր նաեւ մօնկոլագէտ Տընիզ Սինորը:

Բ.

Վիեննա գտնուած միջոցիս ուզած էի նաեւ դասաւորել Արեւելագիտական թանգարանի Հայկական դրամներու փոքր հաւաքածոն, որ ունէր մէկէ աւելի հազուագիւտ դրամներ: Ենթոհիւ լուսահոգի Հ. Ներսէս վրդ. Ակիւնեանի լայն ծանօթութեանց, թանգարանի դրամագիտական բաժնի վարիչը, ընդառաջելով անոր խնդրանքին, մեր տրամադրութեան տակ դրաւ խնդրոյ առարկայ հաւաքածոն: Ուսումնասիրեցի ու դասաւորեցի զանոնք, ու ապա, կէս տպագիր, կէս ձեռագիր մասնաւոր թերթերու վրայ նմանահանութիւններով ամբողջացուցի: Օրինակներէն մէկը յանձնեցի թանգարանի տնօրէնութեան, երկրորդը՝ տուի Միխիթարեան թանգարանին, իսկ երրորդը՝ վերապահեցի ինձի:

Միխիթարեանց թանգարանի հայկական դրամներու մասին այստեղ պիտի չխօսինք, այդ մեզմէ պիտի պահանջէր նուազագոյն 200 էջեր եւ ամիսներու գործ: Այդ հաւաքածոն իր կարողութեամբ կրնայ սերունդներու ուսումնասիրութեանց նիւթ հայթայթել ու տակաւին պիտի մնայ ուսումնասիրելի: Մասնաւոր որ այդ դրամները, շնորհիւ Սուրիա եւ Լիբանան գտնուող վարդապետներու թիւով կրկնուած կարելի է սեպել: Մենք զանոնք ուսումնասիրեցինք մեր ըմբռնած դասաւորութեան կերպերով, նկատելով որ նախապէս մեզմէ առաջ ծանօթ ուրիշ կերպեր գոյոթիւն չեն ունեցած, ինչպէս այդ կերպով դասաւորած էի նախապէս Սուրիոյ Տափնէի դրամագիտիս պարագային - այժմ կը գտնուի Երեւանի ՊՊ. Թանգարանի մէջ -, Ս. Լազարու թանգարանի, Փարիզեան մատենադարանի, Փարիզի Ազգային Մատենադարանի Ելումպէրկէրի Հայկական հաւաքածոյին - որու շնորհիւ պատրաստեցի իմ Մորպոնի դրամագիտական թէզս -, յետագային Պէյրութի Համագային Փալանճեան ձեռարանի ձորձ Մարտիկեանի կողմէ նուիրուած հաւաքածոյին եւ ուրիշներու:

Արդէն վերելի Մոնկոլ դրամները պարզապէս պատրուակներ էին, տեսակ մը յառաջաբան, զիս այլապէս հետաքրքրող միւս նիւթերուն եւ յուշերուն անցնելու համար:

Վիեննական յուշերս մասամբ ուզեցի այս առթիւ գրի առնել, որովհետեւ անոնք սկսած էին աղօտիլ մտքիս մէջ, մանրամասնութիւնները իրար խառնուիլ, անուններու շփոթ եւ այլն:

Գ.

Այսպէս Վիեննայի Գեղարուեստի թանգարանի մէջ առիթը ունեցայ ծանօթանալու իւրոտած կարճ կաշեայ տաբատով ալեհեր եւ կարճուկ բժիշկի մը, որ եկած էր թանգարան գորգի մասնագէտի մը կարծիքը առնելու ժամանակին իր թուրքիայէն գորգի մը մասին:

Որտեւ հետաքրքրուեցաւ երբ առաջին անգամ ըլլալով սեղանիս վրայ տեսաւ Կիլիկեան Հայկական դրամներ: Հետաքրքիր մարդ, իրեն համար նորութիւն մըն էր հայ դրամներու գոյութիւնը: Զինք վանք տարի ու անոր ցոյց տուի հազարաւոր Կիլիկեան-Ռուբինեան դրամները: Ուրեմն շնորհիւ այդ յանկարծուտ ծանօթութեան, մեծապէս օգտակար հանդիսացաւ: Օր մը, այսպիսով, զիս առաջնորդեց Քափուչիներու եկեղեցոյ ընդերկրեայ Հաբապուրկներու արքայատոհմին յատուկ մեծղի դամբարանը: Այդ խորհրդաւոր դամբարանի կեդրոնական միջանցքի մէջտեղը գտնուող բոլորակին շուրջ, գետեղուած կրանիթեայ տապանաքարերու շարքին, ցոյց տալով բաց մնացած անկիւն մը ըսաւ. «Մինչեւ վերջերս, այստեղ կը հանդէսէր Ռայխսթակի դուքս՝ Նաբօլէոնի վաղամեռիկ տղուն՝ Արծուիկի դին: Հիթլեր Գաղղիոյ ժողովուրդը սիրաշահելու քաղաքականութեամբ, տեղահանեց դուքսի դին այստեղի իր հանգստարանէն ու զայն փոխադրեց Փարիզ, որպէսզի Ան իր վերջնական հանգիստը գտնէր իր հօր կողքին, էնվալիտի տաճար-դամբարանին կեդրոնական սրահի չորս սենեակներէն միոյն մէջ, որոնք բարձրագիւր կը շրջապատեն Մեծ Նաբօլէոնի եօթը կապարեայ դագաղներու մէջ ամփոփուած գերեզմանը»:

Կիրակի օր մը այցելեցինք Վիեննայի աշխարհահռչակ գերեզմանատունը Zentralfriedhof, ուր կը հանգչին երաժշտութեան աշխարհի տիտանները՝ Մօցարտ, Շթրաուս, Պեթհովէն եւ ուրիշներ: Այնտեղ զարմանալի հակադրութեան մը ակննատես եղայ: Պեթհովէնի համետ մահարձանին մօտիկ կը բարձրանար դասական ոճով շինուած տաճարաձեւ մեծղի ճերմակ մարմարեայ շէնք մը: Բժիշկին հարցուցի, թէ ո՞ր երգահանին նուիրուած է այդ սքանչելի մահարձանը: Բժիշկը պատասխանեց քմիծաղով. «Աստ հանգչի գետնախնձորի վաճառական մը»:

Դ.

1952 թ-ի ամրան Վիեննայի մէջ տեղի ունեցաւ Եօթնօրեայ կրօնական մեծղի հանդիսութիւն մը, Կաթողիկէներու օր անունով՝ ԿԱԹՈՒԿԷՆ-ԹԱԿ: Այդ առիթով փօստի սպասարկութիւնը հրատարակեց Գրիստոսի պատկերով դրոշմաթուղթ մը: Այս հանդիսութիւնը պատճառ դարձաւ որ ալ աւելի սերտանայ մեր բարեկամութիւնը բժշկին հետ: Այս օրերուն տեղի ունեցաւ հայածէս քառաձայն պատարագ մը, Աւստրիացի եւ օտար հաւատացեալներուն համար, Միխիթարեան հայ

րերու կողմէ, քաղաքիս կարեւոր եկեղեցիներէն մէկուն մէջ: Նախապէս պատարագը գերմաներէնի թարգմանուած էր, որպէսզի օտարները կարենան հետեւիլ արարողութեանց ու ծխակատարութեանց: Երգեհոնի ընկերակցութեամբ երկսեռ երգչախումբը, որ կազմուած էր տեղացիներէ, կրցաւ հարազատօրէն ու անթերի կատարել մեղեդիները: Այդ առթիւ հրաւիրած էի մեր բարեկամ բժիշկը եւ տիկինը:

Ե.

Համագումարին վերջին օրը, ներկայ գտնուեցանք հանդիսութեանց վերջնադիր փակման իրիկնային շքերթին, որ անվերջ ժամեր տեւեց: Շքերթը անցաւ Աւստրիական խորհրդարանի առջեւէն: Խորհրդարանի վարի սանդղատներուն վրայ, աթոռներու ու նստարաններու վրայ, բազմած էին հոգեւոր եւ քաղաքական հրաւիրեալները: Այնտեղ էին վարչապետն ու Պապական նուիրակը: Անոնց շարքին մէջ աչքի կը զարնէր Միխիթարեան Միաբանութեան Աբբահայր Հապոգեան Արքեպիսկոպոսը: Մեր բարեկամ բժիշկին ցոյց տալով շարքին փառաւոր մօրուքով այդ հոգեւորականը, բացատրեցի անոր դիրքը եւ հայ ըլլալը (նկար 1):



Ձախէն աջ՝ Վիեննայի Քահանայապետական նուիրակ՝ Գերայ. Dellapiane, Վիեննայի Արքեպիսկոպոս՝ Կարդինալ Dr. Innitzer, եւ Միխիթարեան Միաբանութեան Աբբահայր՝ Գերայ. Հ. Մեսրոպ Հապոգեան. 1952 Սեպտեմբեր:

Օդը ամպոտ էր: Շքերթին երկսեռ մասնակցողները պիտի տողանցէին դիւրավառ բոցկլտուն ջահերով, օրուայ վարչապետին ու հոգեւոր իշխաններու առջեւէն: Ժամեր տեւող այդ շքերթին կը մասնակցէին հարիւր հազարէ աւելի կայտառ երիտասարդներ, լայն շարքերով, եկած երկրի բոլոր շրջաններէն, իրենց ազգային իւրայատուկ տարազներով, այլազան պատմական զինանշաններով, սուրբերու ձեռագործ պատկերներով ու խորհրդանշաններով, փայտեայ եւ գանձայ արձանիկներով:

Ամէն ջահակիր խմբավար, երբ մօտենար Վարչապետին ու պատուոյ հիւրերուն, անմիջապէս կը բաժնուէր խումբէն ու կ'երթար նստել ու օրուայ հիւրերու առջեւի մայթին վրայ (նկար 2):



Ձախէն աջ՝ Կարդինալին ֆարսուղար՝ Prälät Dr. Moser, Կաթողիկէ համաժողովին նախագահ՝ Dr. Henz, Աւստրիոյ վարչապետ՝ Leopold Figl, Կարդինալին փոխանորդ՝ Գերայ. Dr. Weinbacher, Քահանայապետական նուիրակ Գերայ. Dellapiane, Վիեննայի Արքեպիսկոպոս՝ Կարդինալ Dr. Innitzer, Միխիթարեան Միաբանութեան Աբբահայր՝ Գերայ. Հապոգեան:

Անմիջապէս որ այդ խումբի տողանցքը վերջանար, ջահակիր խմբավարը ոտքի կանգնելով ու իր տեղը կը զիջէր յաջորդող ջահակիր խմբավարին: Ու այսպէս անվերջանալիօրէն, խումբերը զիրար կը յաջորդէին իրենց դիւրավառ ջահերով, երգելով եւ երաժշտական գործիքներով: Անմոռանալի եւ զգլխիչ պահեր էին անոնք: Ուշ ատեն իրարմէ բաժնուեցանք, խոստանալով որ բժիշկը յաջորդէր զիս կարեւոր ուխտատեղի մը պիտի տանի եւ կը փախաքի որ ետքը այցելեմ նաեւ իր բնակարանը ու միասին ճաշենք, ուր զիս շահագրգռող հայկական իրերու կրնամ հանդիպիլ:

Կարծեմ կիրակի օր մըն էր, երբ հանրակառք մը առնելով հասանք Թերմիւնիւս: Անկէ հետիտն սկսանք շագանակեղենի ծառերով հարուստ պուրակի մը մէջէն, քիչ մը զառիվեր, քալել գէպի Լէօփոլտսպերկի ուղղութեամբ, որուն մօտակայքը նշանաւոր ուխտատեղի մը կար: Մեր ուղղութեամբ, երկսեռ մարդկային երկար շարան մը, իրենց այլազան կամ գիւղական տարազներով: Ասոնք երկրի զանազան կողմերէն Կաթողիկէն-թակ հանդիսութեանց մասնակցողներէն էին հաւանաբար:

Ուխտատեղին անտառի մէջ բացուած բացատի մը մէջ շինուած մատուռ մըն էր, որ տարուայ համարեայ բոլոր օրերուն անոր դռները բաց կը մնային եւ ուխտաւորներուն մեծ ու փոքր մոմերը միշտ վաղ եւ ծաղկեփունջերը անթառամ: Մատուռը բարձրացած է այն հողին վրայ, ուր ժամանակին,

Վիեննայի թրքական ճակատագրական պաշարումին, Աւստրիացիներուն օգնութիւնն գացող Լեհական կամաւորներու զօրագունդը, նախ քան թրքական բանակին հետ ճակատիլը, հոգեւորականի մը կողմէ հաղորդութիւն ստացան, այն կանխամտածումով, որ մի գուցէ իրենցմէ շատերը կրնան նահատակուիլ:

Մատուռէն դուրս հիանալի տեսարան: Անծայրածիր բնակար մը, խորքին վրայ բազմած Վիեննայով, ուր տեսանելի են Ս. Ստեփաննոսի - մեծղի - տաճարը, քաղաքապետարանի մեծղի աշտարակները, ձախէն թաւալող Դանուբ մեծ գետը: Այս ընդարձակ դաշտին մէջ տեղի ունեցած է նաբողէոնի Վակրամի ճակատամարտը:

Առ ի տեղեկութիւն, մեր բժիշկին յայտնեցի, որ Լեհ կամաւորներուն յիշատակին նուիրուած այս ուխտատեղին լուսեան ինք իր մէջ կը կրէ այլապէս ուրիշ խորհուրդ մըն ալ, որ հաւանաբար ծանօթ չէ շատ շատերուն: Լեհական այդ զօրագունդին հրամանատարն հայ մը եղած է, եւ որուն հրամանատարութեան տակ կային մեծ թիւով հայ կամաւորներ, որոնք Սելճուկներու արշաւանքներէն ճողոպրած Լեհաստան ապաստանած էին: Ասոր վրայ մեր բժիշկը գլուխը շարժելով ըսաւ. «Ջարմանալի գուգորդութեամբ՝ ամէն քայլափոխի հայերու հետքերուն պիտի հանդիպինք»: Շարունակելով ըսի շնորհիւ այդ ճակատամարտին, կարեւոր անկիւնադարձ մը տեղի ունեցաւ Քրիստոնեայ աշխարհին, ուր ոչ միայն թուրքերու դէպի Արեւմուտք յառաջընթացը դադարեցաւ, այլ այդ թուականէն սկսեալ նսնմացաւ անոր մինչ այդ դէպի Արեւմուտք յաղթական ընթացքը: Այսպիսով Եւրոպան ազատեցաւ միջին դարու թուրք բարբարոսներէն:

Ուխտատեղիէն վերադարձը աւելի դիւրին դարձաւ, որովհետեւ ճանապարհը վայրէջք էր: Յոգնած բժիշկին բնակարանը հասանք որ մօտ էր անտառի եզրին: Ճախտակեայ երկյարկանի խոշոր շէնք մըն էր, որուն քիչ մը յառաջացած մասերուն վրայ տեսանելի էին ծաղկած թաղարներ: Բժիշկը գաւակներով բախտաւորուած չէր: Տան մեծ ընդունարանը ունէր գեղջկական ոճով կահկարասիներ եւ սրահին մէկ անկիւնը բարձրացած էր յախճապակիներով պատած հսկայ կիսաբոլորակ բուխերիկ մը, քովիկը սղոցուած կոճղերով վառելանիւթ: Պատերուն, հոս ու հոն եղջերուներու զմուռուած գլուխներ:

Տանտիկինը արդէն ճաշը պատրաստած էր: Սեղանին վրայ կար գարեջուր եւ գինի, տաք գետնախնձոր, կանաչեղէններ, տեղական տեսակաւոր ապուխտներ, միրգեր, շաքանակ եւ այլն: Ծախին յաջորդեց մեծ սկահակներով սուրճ: Այս միջոցին, բժիշկը, ծառի կոճղէ պատրաստուած մեծղի ծխամորճ մը բերաւ ու սկսաւ զայն ծխախոտով թխել - աւելի ճիշտ ըլլար ըսել ցուցադրել - որ չինական ձեռարուեստի նմանող յորինուած մը ունէր, ժայռերու եւ այլազան թռչնազգիներու ու բոյսերու քանդակներով զարդարուած: Այդ ծխամորճը որպէս գեղազարդ երկու ծոպերով թիւով մը պատէն կը կախուէր: Ծխամորճը պատրաստելէ ետք մասնաւոր լուցկիով - մախրով - վարեց եւ ինծի դառնալով ըսաւ. կը ծխէ՞: Իրականէս հանեցի պարզ սիկարէթի տուփ մը եւ վառեցի գլանիկ մը: Ջայն տեսնելով բժիշկը ըսաւ. Քաղաքիս մէջ աւելի որակաւոր ծխախոտի տեսակներ ալ կան: Պատասխանեցի որ այս ծխախոտը անձնապէս չեմ գնած, այլ ատիկա ինծի վերապահուած ծխախոտի բաժինն է որ վանքի Աբբասայրը, Միաբնութեան միւս ծխող անդամներուն համահաւասար, ինծի ալ բաժին կը հանէր:

Բժիշկը քովնտի սենեակը գնաց ու բան մը բռնած վերադարձաւ ըսելով Քանի որ ծխող ես, ինձմէ քեզի փոքրիկ յիշատակ մը պիտի տամ, մէկ պայմանաւ որ ըսես թէ ինչպիսի նիւթով ձեւակերպուած է յիշատակի այս ծխամորճը: Ընդհանրապէս գիտէի որ այս տեսակ ծխամորճերը կը պատրաստուին Սե՛ր ԱՆՏԱՌԻ՛էն որսորդուած եղնիկներու կամ եղջերուներու կոտորներէն: Նման ծխամորճ մըն ալ ես ալ գնած էի, աներ հօրս Ջահլէի Ծէր Մաշոոց Աւագ քահանայ Ոսմերիչեանին համար, որ նման անթիքա բաները կը սիրէր: Բայց ներկայ պարագային, այս ծխամորճը կենդանական եղջիւրէ մը չինուած ըլլալը խիստ կասկածելի էր: Այլապէս ինչո՞ւ բժիշկը պիտի հարցնէր անոր ինչպիսի նիւթէ պատրաստուած ըլլալը: Ծխամորճը կը նմանէր աւելի բուստային արմատի կամ ծովային ծակոտկէն բացուածքներով մեխեկած բոյսի մը, կամ չինական մանր ձեռարուեստի արտադրութեան մը: Սակայն բոլոր ենթադրութիւններս, օդը ցնդեցան: Մեր բարեկամը քիթին տակէն խընդալով եւ վերջ տալով մտային չարչարանքիս, ըսաւ. Պիտի զարմանա՞ս երբ յայտնեմ որ ան չին-

ուած է պարզապէս սովորական եղջերուի պատկանող կոտորէ մը: Ահա թէ ինչպէս: Ծխամորճիս այն մասը որ ձեզի այնքան մտատանջութիւն պատճառեց, կենդանիին եղջիւրին արտաքին տեսանելի մասին հետ անմիջական առնչութիւն մը չունի, այլ ան կը ներկայացնէ կենդանիին եղջիւրին այն մասը որ խրած է գանկոսկրին մէջ, կազմելով անոր արմատը, նման ծառի մը արմատին, որ իր արմատները խրած է հողին:

Ուրեմն արուեստագէտ վարպետը ծխամորճը չինած է կենդանիին կոտորի արտաքին տեսանելի մասէն, իսկ միւս կէսը, կենդանիին գլխուն գանկոսկրին մէջ խրած հաստաբուն մասէն: Ծխամորճեան այս ասուլիսէն ետք, տանտիկինը փափաքեցաւ տան մնացած մասերուն ալ ծանօթանամ, ըսելով որ զիս հետաքրքրող իրերու կրնամ հանդիպիլ: Ոչխտ ճաշակով չըջանակներու եւ փոքր սեղան-ցուցափեղ կերու մէջ շարուած էին ժանեսակներու ու զանազան կերպաններու վրայ աշխատուած ձեռագործներ, որոնց վրայ տեսանելի էին շատ անգամ հայատառ վրձնարարական արձանագրութիւններ: Տանտիկինը այս բոլորը հետը բերած էր թուրքիայէն եւ հայաշատ գաւառներէն: Ուշի ուշով դիտեցի այդ ձեռարուեստի բազմազան նմոշները, որոնք երբեմն պարզ ճերմակ դերձանով - ժանեսակներու բաժին - երբեմն գոյնզգոյն երբեմն սրմա կամ սկզբիկ, երբեմն ուլունքներով ազուցուած, երբեմն բրդեայ, երբեմն մետաղեայ եւ երբեմն ալ ուռուցիկ ձեւերով գործուած: Տիկինը, որպէս օգնական ամուսինի, երբեմն կ'այցելէր հայ հիւանդներուն, սրկումներ կը կատարէր, եւ այդ չըջանին երբ այնքան յարգի ու անգտանելի էին ասբերին-ասիտերինը, քինան-քինքինա, իօտ, աչքեակի զանազան հեղուկներ, ձկան իւղ, վէրքի փաթոցներ եւ բամբակ, ձրիաբար կը բաժնէր ընդհանրապէս չբաւորներուն (գերմանական դարմանատուներէն): Հիւանդները որ միշտ չարքաչ դասակարգին կը պատկանէին, գիտնալով որ Տօքթօրիմ խանուսը շատ մէքալի է ժանեսակներու ու զանազան ձեռագործներու, առ ի երախտագիտութիւն անոր կը նուիրէին իրենց գործած ձեռարուեստէն նմոշներ:

Այս ձեւով էր դարձեալ, որ դժուար ծննդաբերութեան մը առիթով - մոռցանք ըսելու որ սօքթօրին խանուսը ուսած էր նաեւ դայեակութիւն: Մնդաբերողին ամուսինը, որ հոգակուած էր նաեւ մանկական տախտակեայ գեղեցիկ օրօրոցներ պատրաստելու արուեստով, առ ի վարձատրութիւն, իմանումին նուիրած էր գեղակերտ օրօրոց մը, որ այժմ որպէս գեղօր-գարդակահա, բազմած էր տիկինին սենեակին պատուոյ այս անկիւնը:

Օրօրոցը երկար դիտեցի, հրաշակերտ, արուեստով չափուած եւ զարդարուած, կարծէք անիկա ոչ թէ հայաշխարհի հեռաւոր արհեստանոցէ ելած էր, այլ յայտնաբերուած էր փարաւոնեան դամբարանի մը նախագաւիթէն, որպէս մանրանկար անդրձիւրիմեան մակոյկ: Այնքան ողորկ էր անոր արտաքին մակերեւոյթը, որ փայլուն ալապատրէ չինուած ըլլալու խաբկանք կ'ազդէր: Առիւնընող եւ միեւնոյն ժամանակ խորհրդաւոր էր անոր ներքնակողմի գլխակողմի բարձրադիր կողմը, չըջանակուած զոյգ բոլորակներու մէջ քանդակուած ճաճանչաւոր համահաւասար թեւերու խաչովը:

Ի տես այս մնացորդաց բեկորներուն, պահ մը միտքս թեւածեց մեր աշխարհի անհամար շէներուն վերեւ, ուր այսօր շնագայլերը կը գահակալեն, եւ ուր գեհնային չարաշուք օր մը, պարպուեցան իրենց սրբազան պարունակութիւնէն: Անոնց տէրերը խողխող ուեցան կամ եղան աշխարհացորի ու թափառական:

Այդ օր լաւ տրամադրութեամբ չբաժնուեցայ բժիշկի բնակարանէն:

9.

1952 թ.ին Վիեննայի մէջ տեղի ունեցաւ 130-ամեայ տօնակատարութիւն մը, նուիրուած ԼՈՒՐ ԳԻՇԵՐ՝ ՍՈՒՐԲ ԳԻՇԵՐ՝ հոգեւունչ երգին, որը այսօր համարեա աշխարհի բոլոր քրիստոնեայ ժողովուրդներու կողմէ թարգմանուած ըլլալով, կ'երգուի Ս. Մնդեան տօնական օրերուն: Երգին հեղինակներն եղած են Փրանց Կրիպէր եւ Ժօզէֆ Մօզր: Այդ առթիւ փօստի տնօրէնութիւնը հրապարակ հանած էր յիշատակի դրոշմաթուղթ մը, վերոյիշեալ հեղինակներու անուններով ու պատկերներովը:

Ժամանակին այս երգը երգուած է որբերու կողմէ Վիեննայի արքայական եկեղեցիին մէջ, ի ներկայութեան Աւստրիոյ կայսեր ու կայսրուհիին: 130 տարիներ անց, Կաթոլիկէնթակ շաբաթօրեա-

կին, նույն երգը կրկնուեցաւ նոյն եկեղեցիին մէջ: Այդ հանդիսութեանց ներկայ էր Մխիթարեան Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեան որուն կ'ընկերանայի նաեւ եւ: Անդէն Հ. Ակիւնեան առիթ չէր փախցնել զիս Վիեննայի տեսարժան վայրեր պատրաստելու: Այդպիսի օր մըն էր որ զիս տարաւ քաղաքէն դուրս գտնուող Կայսերական Շէօնպրուն պալատը — Աւստրիոյ Վէրսալը — (նկար 3):



Խաչանշուածներն են՝ Հ. Ներսէս վրդ. Ակիւնեան ու եւ:

Ե.

Մխիթարեան վանքը կը գտնուի համանուն ՄԽԻԹԱՐԻՍՏԷՆԿԱՍԷ անունով նեղ անցքով փողոցի մը մէջ: Բազմադարեան հաստատութիւն մը, որ ունի իր ընծայարանը, եկեղեցին նորոգուած 1874-ին Գամբիլօ Սիլբէի համբաւաւոր ճարտարապետին յղացումով: Եկեղեցին, բացի Մայր խորանէն, ունի չորս խորաններ եւս, որոնցմէ մէկն է Ս. Գրիգոր Լուսաւորչի խորանը, շինուած Թէօֆիլ Փօն Հանսընի, Վիեննայի խորհրդարանի ճարտարապետին նախագծողը: Իսկ նկարը՝ գործն է նշանաւոր նկարչուհի Բայիլէ-ի: Վանքը ունի նաեւ իր թանգարանը ու պատկառելի Մատենադարանը: Թանգարանի պատերէն կախուած են բազմաթիւ հայ գեղանկարիչներու հայրենի տեսարաններ: Գովնտի կանգնած են հայկական տարազներ կանգնած վիճակով: Սրահին յառաջամասին կը գտնուին երկար գոյգ ապակափեղ կերու մէջ, ամբողջութեամբ հայկական դրամներու հաւաքածոներու շարքերը:

Վանքի տպարանը նշանաւոր է իր հրատարակչականով որ կրնայ յիսուն լեզուներով գիրքեր տպել, որ միակ տպարանն է իր տեսակին մէջ: Վիեննայի տպարանը նշանաւոր է նաեւ իր հարիւրամեայ ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ պարբերաթերթով որուն արգասիքն է բազմահարիւր հայ եւ օտար պատմաբաններու եւ բանասէրներու հայադիտական երկերու մատենաշարը:

Հիթլերականները չըջանի մը համար գրաւած են վանքի կարեւոր խուցերը, զանոնք գործածելու համար որպէս գրասենեակներ: Կանոնաւոր ջերմութեան համար անոնք այդ խուցերէն ներս հաստատած են քառանկիւն ուղղահայեաց թափձու վառարաններ: Այդ վառարաններուն առաւելու-

թիւնը այն է, որ անգամ մը որ իրենց մէջ թիմուած փայտին հետ հանքածուխն ալ լաւ մը բոցավառի, այլեւս սենեակներուն ջերմութիւնը երկար ժամանակ անփոփոխ կը մնար: Անոնց ներքնամասը պատած են կարմիր կղմինտրներով, որու շնորհիւ երկար ատեն կը պահուի անոնց ջերմութիւնը, նոյնիսկ երբ անոնց մէջի կրակը շիջած ալ ըլլայ ամբողջովին:

Անկախ այս վառարաններէն, վանքը ունէր իւրաքանչիւր ջերմութիւն մատակարարող կերպ մը, որ յատուկ էր Վիեննական կարգ մը հին մեծ շէնքերուն, որոնք ունին ընդլայնակալ մասնաւոր փուռեր, որոնք իրենց տաքութիւնը հաւասարապէս կը բաժնեն բոլոր վերնայարկ սենեակներուն կամ մեծամեծ դահլիճներուն, անոնց պատերուն տակ գտնուող մասնաւոր ծակոտկէն ցանցերէն: Սակայն պատերազմին վառելանիւթի դժուարութեանց պատճառաւ, պէտք եղած ջերմութիւնը չէր ստացուեր: Գերմանները երբ կը պարպեն վանքի խուցերը, այնտեղ կը ձգեն այդ վառարանները: Անոնք մինչեւ 1952 թուականը գործածական էին:

Ը.

Վիեննա գտնուած միջոցիս ծանօթացայ Պուկարահայ երկայնահասակ բարակուկ երիտասարդէի մը, Զաքարեան անունով — կրնայ ըլլալ որ այս երիտասարդը իր իսկական անունն ու մականունը փոխած էր եւ եղած էր Կայծակ Զաքարեան —, որ փախած էր Պուկարիայէն ու շուրջ ատուած Վիեննայի Սովետական Զօնը: Ինծի համար գաղտնիք մնաց թէ ինչպէս ան պաշտօն գտած էր քաղաքիս Սովետասէր մշակութասէր ակումբին մէջ որպէս պատասխանատու եւ քարտուղար: Գեղազետ եւ հին պատաստներու մասնագէտ եւ շնորհիւ զինուորներու ոմանց շահատակութեանց, որոնք իր միջնորդութեամբ կը ծախէին այդ պատաստները, իրեն ապահովելով նաեւ փոքրիկ շահաբաժին մը:

Բնակութիւն հաստատած էր Ակումբին սենեակներէն միոյն մէջ եւ ուրեմն յաւելեալ ծախսեր չունէր: Պուկարիայէն եկած թոքախտաւոր էր ու կը դարմանուէր: Զափազանց զգոյշ էր:

Անգամ մը միասին պտոյտի եղած էինք Սովետական Զօնի լայն պողոտայ մը, երբ աչքս զարկաւ լուսանկարիչ Մանասէի ցուցատախտակը: Անոր տակի պատին վրայ ապակէփեղկ եւ մէջը բնական մեծութեամբ մերկամարմին կնոջ մը պատկերը ցուցադրուած էր: Զաքարեանին ըսի երթանք մայթին միւս կողմը, դիտենք այդ պատկերը: Զաքարեան տեսակ մը դժկամութիւն ցոյց տուաւ եւ ըսաւ, մինակդ գնա եւ ուզածիդ չափ դիտէ, ես այստեղ քեզի կը սպասեմ: Միտքէս ըսի, թերեւս տաւորինակին մէկն է — էքսանթիք —: Անցայ մայթին միւս կողմը ու Մանասէի մեծ ու փոքր բոլոր արուեստով լուսանկարուած պատկերները դիտեցի, որպէսզի օր մը երբ Պէյրութ վերադառնամ, այդ մասին խօսիմ աշխարհահռչակ մեր բարեկամ լուսանկարիչ Մանուկին: Զաքարեանին չի գալուն պատճառը հետեւեալն էր. դիմացի շէնքին դրան մօտիկը երկու ուս գաղտնի ոտտիկաններ կեցած կը խօսակցէին, որոնցմէ մէկը ծանօթ էր ինծի:

Որքան կարելի է, պէտք է խուսափիլ ամենադոյզն պատճառներ տալու: Թերեւս ալ իրաւունք ալ ունէր: Որովհետեւ՝ ըստ իր պատմածին, կենսագրութիւնը հետեւեալը եղած էր: Պուկարիա գտնուած ժամանակ հօրը մօտ Ամերիկեան տղարներ գտնուած են ու կը բանտարկեն: Կառավարութիւնը կը գրաւէ անոր բոլոր ինչքերը: Այդ ժամանակ Զաքարեան որ տեղւոյն գեղարուեստի Ինստիտուտը կը յաճախէ, որպէս անբաղ ձալի, կը վտարուի այդ հաստատութենէն, մինչ այդ, հայրն ալ կը մեռնի բանտին մէջ: Ընտանիքով յետին թշուառութեան կը մատնուին: Զաքարեան անսնունդ թոքատապի կը բռնուի: Բժիշկներն եւ հիւանդանոցները կը մերժեն զինք խնամել: Այս բոլոր պատճառներով կ'որոշէ վերջնականապէս հեռանալ Պուկարիայէն եւ կամաց կամաց Պալքանեան կարգ մը երկիրներէն անցնելով, շուրջ կ'առնէ Վիեննայի Սովետական բանակի գրաւման տակ գտնուող շրջանին մէջ: Մրազրած էր ատկէ Զուիցերիա անցնիլ ու յետոյ Ֆրանսա:

Այս շրջանին Վիեննան եւ իր ամբողջ շրջանը կը գտնուէր Սովետական բանակի գրաւման տակ մինչեւ կինցի կամուրջը, ուր Դանուբ գետը կը բաժնէր Ամերիկեան զօնէն: Զաքարեանին հետ ալ ունեցած ծանօթութիւնս ալ հետեւեալ ձեւով եղած է: Այդ շրջանին ծարաւի էինք Հայաստանեան երգերու (սկաւառակներուն), որոնք տակաւին դիւրամատչելի չէին: Հրապարակի միակ սկաւառակները Ա. Շահմուրատի — Ամերիկա — եւ Ալբարտարեանի — Հալէպ — սկաւառակներն

էին: Հայաստանեան սկաւառակները լսած էի վանքին մէջ, մանաւանդ ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻԻ՝ Ձախորդ Օրերը: Միաբանները թելադրեցին դիմել տեղւոյն Հայկական Ակումբի պատասխանատու Ձաքարեանին: Փնտռեցի ու գայն գտայ իր պաշտօնավարած շէնքին չորրորդ՝ յարկին մէջ ու ծանօթացանք: Հիւրասիրեց ու Հայաստանեան քօնեաք հրամցուց եւ հետաքրքրուեցաւ մասնագիտութեամբ: Ուրեմն իրմէ խնդրեցի մի քանի հայկական սկաւառակներ: Ան իր պահեստէն վեց սկաւառակներ նուիրեց:

Ակումբը ունէր ճոխ գրադարան մը բոլորն ստացուած Հայաստանէն: Ակումբը թիթեղեայ բաւական մեծ սնտուկ մը մէջը լեցուն այլազան գունաւոր ազդերով ու Հայաստանի պատկանող բազմաթիւ լուսանկարներով: Ձաքարեան որ տեսաւ որ ուշի ուշով կը դիտեմ գանոնք, ըսաւ. «Եթէ կը փափաքիս կրնաս անոնցմէ մի քանի հատ ընտրել: Անոնք ժամանակին ցուցադրուած էին մեր զօնի մասնաւոր լուսաւոր ապակափեղ կերու մէջ»: Այդ գատած նկարներէն կրնամ տակաւին յիշել հետեւեալները՝ որոնք մինչեւ օրս կը պահեմ ալպօմներուս մէջ, Մարտիրոս Սարեան իր երկու թոռնիկներուն՝ Կատիայի ու Ռուբէնի հետ, Սարեան իր արհեստանոցին մէջ, Սարեան առանձին, Բաշին-Չաղեանի՝ Անի քաղաքի համայնապատկերը, Կարմիր Բլուրի տեսարանները, Դուրիսի պեղումներէն տեսարաններ եւ այլն:

Ձաքարեանէ առաջ, Միխիթարեան հայրերը Հայկական Ակումբէն խնդրած էին Հայաստանեան հրատարակութիւններէն օրինակներ: Սակայն կ'երեւի այդ շրջանի պատասխանատուները, Ղրկուած գիրքերը ուղղակի իրենց տունները կը տանէին ու յաճախ գանոնք կը վաճառէին երկրէն դուրս, Փրանսա եւ այլ երկիրներ: Այս մասին խօսեցայ Ձաքարեանին, որ խոստացաւ յետ այսու ստացուած հրատարակութիւններէն մաս հանել վանքին: Այդպէս ալ ըրաւ: Մի քանի օր ետք Ձաքարեան կը հեռագրէ վանք ու կը թելադրէ մարդ Ղրկել որպէսզի անոր յանձնէ Հայաստանեան հրատարակութիւնները: Լուսահոգի Հ. Ներսէս Ակիմեան, տպարանի յատուկ փոքրիկ կառքի ընկերակցութեամբ՝ կը դիմեն Ձաքարեանին: Իսկ Ձաքարեան որ քաջ ծանօթ էր գրապահեստի գիրքերուն մեծամասնութեան, եւ նոյն ժամանակ, գիտնալով որ Ակումբի պատմագիտական գիրքերուն մեծագոյն մասը թղթատուելու իսկ արժանացած չեն, դառնալով Հ. Ակիմեանին կ'ըսէ. «Ձատէ ուզած գիրքերդ ու տար վանք, շատ աւելի նախընտրելի է ձեր մատենադարանը գարդարեն, քան թէ մի քանի շահագէտներու գոհը դառնան: Թուրքին առածը կ'ըսէ. Կոյրիմ ուզածը մէկ աչք, Աստուած տուաւ երկու աչք»: Հ. Ակիմեան անյազաբար, տպարանի փոքր կառքին վրայ դարսեց կապոց մը գիրքեր: Ձաքարեան Աբբասօր ալ որպէս արմաղան Ղրկեց երկու շիշ Հայաստանեան քօնեաք եւ քաղցրահամ գինի: Այդ օր Կաղանդ Պապայի նմանող սպիտակահեր Հ. Ակիմեանը, վստահ եմ որ ապրած էր իր ամենաերջանիկ օրերէն մէկը:

Ինչպէս վերը ըսի, Ձաքարեան գեղարուեստասէր էր եւ շատ բան գիտեր արուեստներու պատմութենէն, տեսակ մը անգիր համայնագիտարան: Իր հետ շատ մը նկարչական ցուցահանդէսներու գացած եմ, ուր մէն մի պատասխան մասին կուտար մանրամասն նկարագրութիւնն եւ իր գեղագէտի տեսակէտները: Գիտէր նաեւ քիչ առաջ խօսուած լուսանկարին Մանասէի մասին մանրամասնութիւնները, զոր կ'ուզեմ այստեղ ներկայացնել: Այսպէս օր մը անոր բարեկամներէն մէկը, տեսնելով անոր ցուցադրուած մեծադիր առանց դոյզն շղարչի բնորդին, սա դիտողութիւնը ըրած է. «Ամօթ չէ՞ միթէ, որ սիրուն կ'նոջը մերկ մարմինը այսպէս ցուցադրած ես պողոտային վրայ եւ ամէնուն առջեւ: Որուն Մանասէ պատասխանած է՝ Կնոջ մարմնական գեղեցկութիւնը աստուածային կատարելութիւն մըն է, չեմ ուզեր իմ տեսողութեան միայն վերապահել գայն: Միթէ այն բոլոր դասական անուանի նկարիչներու վրձինած բնորդիներու մարմինները, արժանի չեն եղած աշխարհի արուեստի թանգարաններուն մէջ ցուցադրուելու:»

Թ.

Օր մը խօսակցութեան ատեն, Ձաքարեան հարցուց, թէ արդեօք համոտեա՞ծ եմ Միխիթարեաններու պատրաստած ՄՈՒԹԱՐԻՆ նշանաւոր քաղցրօղիին - լիքէօրը - : Ոչ, պատասխանեցի ու իրեն պատմեցի թէ ինչպէս քօղարկեալ ձեւով ուզած էի Աբբասօր ուշադրութեան յանձնել այդ պարագան, որուն ի պատասխան՝ Աբբասայրը պատասխանած էր. «Միրելի Պերճ, եթէ վանքի ճահիլներ

րուն կամ աշխատաւորներուն Միխիթարին հայթայթենք, հարկ պիտի ըլլար վանքի դռներն ալ գոցենք: Բացարձակապէս արգելուած է այդ խմիչքին գործածութիւնը վանքէն ներս, այլապէս, կը հասկնամ միտքդ եւ խնդրածդ ալ մեծ բան մը չէ:»

Շատ չանցած՝ Ձաքարեան վանք հեռագրէ ինչ ըսելու համար, որ յաջորդ կիրակի միասին պէտք է Վիեննայի Լուսաւորչականներու Առաջնորդին այցելենք, որ կը փափաքի հետս ծանօթանալ: Որոշեալ օրը գացինք - որ կարծեմ չէնք մը վերջին յարկին վրայ կը գտնուէր: Այդ յարկաբաժնին հիւրասրահը մատուռի վերածուած էր, որուն վերջաւորութեան բարձրացած էր համեստ խորան մը, Աստուածածնայ եւ Յիսուս Մանուկի պատկերով: Օդին մէջ եւ պատէ պատ նեղ երիզ մը, որուն առաջին տողը կը սկսէր՝ ՈՒՐԱՆ ԼԵՐՈՒՔՈՎ ու կը վերջանար՝ ՀԱՍՏԱՏԵՑԱԻ ՄԱՏՈՒՄ Ի 1943:

Պատարագէն ետք, Առաջնորդը մեզ տարաւ իր Առաջնորդարան-սենեակը, ուր մեզ պատուասիրեց անուշիկ եններ հրամցնելով: Մօտ յիսուսի մօտ ճերմակ եւ անտկառելի մօրուքով հոգեւորական մըն էր, անուշը՝ Եղիշէ Մրգ. Վրդ. Իւթիւճեան: «Պարոն Պերճ, գիտես թէ ինչո՞ւ վարդապետը ուզած է քեզի հետ ծանօթանալ: Անցեալները քու մասիդ կը խօսէինք եւ ես անոր պատմեցի Աբբասօր հետ ունեցած ՄՈՒԹԱՐԻՆի ասուլիսդ: Արդ, քու բախտէդ, վարդապետը ազգային նուէր կը ստանայ շիշ մը այդ խմիչքէն: Եւ յիշելով մեր խօսակցութիւնը, խնդրեց ինձմէ, որ քեզ ծանօթացնեմ իրեն հետ» ըսաւ ինձի Ձաքարեան:

Վարդապետը երեք բաժակներով բերաւ շիշը: Համով հոտով խմիչք մըն էր: Բաւական ուշ հրատեչտ առնելով եւ շնորհակալութիւն յայտնելով վարդապետին իր ազնիւ հիւրասիրութեան համար, բաժուեցանք, մաղթելով որ յառաջիկային, նորանոր Միխիթարիններով պճնուի անոր համեստ սեղանը:

Այս անակնկալ այցը տեղի ունեցաւ 30 հոկտ. 1952 թուականին: Եկեղեցին կը գտնուէր կարծեմ Տոմինիքանէրբասթայ թիւ 10, ամենավերջի յարկը:

Թ.

Վիեննայի յուշերուս մէջ ծիծաղելի տեղ մը կը գրաւէ հետեւեալ դրասօճէտօ-քօմիք դէպքը: Ահա թէ ինչպէս: Մեր բարեկամ հայագէտ Տաուսէթ ինձ թելադրեց որ երբ առիթ ունենամ, այցելեմ քաղաքիս հանրային նշանաւոր պարտէզը - Schwarzenberg Platz, Schwarzenbergpark - դիտելու համար այն յուշարձանը, որ պատերազմի վախճանին՝ Սովետները բարձրացուցած էին, եւ որուն ճարտարապետը հայ մէկն էր: Պայտածեւ սինազարդ յատակազօի մը վերջաւորութեան, կը բարձրանայ երկնասլաց կոթող մը, որուն գագաթին կանգնած է գրոհ տուող, գէն ի ձեռին, գիւնուոր մը:

Ուրեմն Կիրակի օր մը, մօտաւորապէս երեկոյեան ժամը հինգին, եկած էի ձրի Ռուսական շարժանկար դիտելու: Սակայն իմ բախտէս այդ օրը կինօ՞ի սրահը յատակացուած էր կուսակցական համաժողովի: Առիթէն օգտուելով՝ քայլերս ուղղեցի խնդրոյ առարկայ հանրային պարտէզը: Օդը ցուրտ էր եւ ամպոտ եւ հրապարակն եւ պարտէզը գրեթէ մութ: Այդ շրջանին Վիեննան համարեա մութի մէջ կ'ապրէր: Մօտեցայ պարտեզին, որ ծառախիտ ըլլալուն, որոշ նշմարելի չէին ներսի մանրամասնութիւնները: Այցելուներ ալ չկային: Սակայն ներսէն, դժուար չէր գտնել կեդրոնական բարձրադիր յուշարձանը որ ճերմակ պատուանդանի մը վրայ բարձրացած էր: Սկսայ կամաց կամաց մօտենալ անոր: Սակայն յանկարծ յուշարձանին պատուանդանը, որ ամբողջովին բոցուած չէր ծառերու ճիւղերով, աչքիս սեւ շուք երեւցաւ: Սկիզբը կարծեցի, լոյսի եւ շուքի կրկնեղբուրթ խաղ էր տեսածս, սակայն այդպէս չէր: Որովհետեւ պատուանդանի ճերմակ պատասխան քով նստի, կարծես մէկը գիտ կը հետապնդէր: Անակնկալի եկած էի եւ գիտնալով որ պարտէզին մէջ ինձմէ գատ որեւէ մարդ չկար, վախ մտաւ սիրտս, նա մանաւանդ որ այդ ուրուական կարծուածը ձայն ծալուուն հանած չուներ: Ակնթարթի մը մէջ այդ մարդուկ-ուրուականը անյայտացաւ յուշարձանին ետին: Ես ալ առանց երես դարձնելու, վախնալով որ մի գուցէ ետեւէս կրնամ յարձակման ենթարկուիլ, ով գիտէ կրնար գող կամ սատիք մը ըլլալ, սկսայ ետեւ ետեւ տեղ քայլ ընել, հասնելու համար պարտէզի փրկութեան ելքին:

Անգամ մը այդ կօշմարէն դուրս գալով, սկսայ արագ արագ ու քրտնաթոր այդ վայրէն հեռանալ, անիծելով շար սատանան ու նաեւ մեր բարեկամ Տաուսէթը:

Յաջորդ օր երեկոյան, սուրճի ժամուն, ինչպէս միշտ, միաբաններուն հետ հաւաքուած էինք վանքի վարի սենեակներուն մէկուն մէջ: Վարդապետ մը հարցուց, ու՞ր էիր երեկ կէսօրէ ետք: Պատմեցի գլխուս եկածը: Պատմութիւնս լսելէ ետք՝ բոլորը միաբերան սկսան խնդալ: Երբ կրկնեցի պատահածը, ներկաները ալ աւելի անզուսպ սկսան խնդալ: Անակնկալի գալով եւ վրդովուած հարցուցի պատճառը այդ խնդուքին: Ի վերջոյ Հ. Ներսէս, ինքն ալ խնդալով, բացատրեց ինծի խընդուքներուն առիթ տուող շարժառիթը: Ահա թէ ինչպէս. «Վիեննան գրաւող բանակը Սովետականն եղած էր եւ ի յիշատակ այդ յաղթութեան, բարձրացուցած էին այդ երկնասլաց կոթողը, որուն պատուանդանին վրայ գրած էին՝ ՎԻԵՆՆԱՆ ԻՐ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ: Գրութիւնը մասամբ ճշմարտութիւն էր, որովհետեւ Աւստրիացի ժողովուրդը յօտար կամքով՝ Anschluß-ին չէր միացած – թէեւ Հիթլէր Աւստրիացի էր:

Սակայն ազգայնամոլ ներ կամ գերմանասէրներ քանիցս փորձեր են ականահարել այդ մեծղի յուշարձանը: Ի վերջոյ Սովետ հրամանատարութիւնը պատասխանատու կը նկատէ այդ խափանարութեանց համար տեղական իշխանութիւնները: Իսկ տեղական իշխանութիւնները բարդութիւններ չստեղծելու համար, գիրք եւ ցերեկ հսկող պահակներ կը կարգէ, որպէսզի հսկեն յուշարձանին եւ նման անախորժ դէպքերու առիթ չտան»: Բնականաբար ես անտեղեակ այս բոլորէն, ազատ եւ անհոգ ուզած էի մօտենալ խնդրոյ առարկայ յուշարձանին, եւ այն ալ համարեա անմարդաբնակ եւ մթութեան մէջ: Այսքանով չէր վերջացած պատմութիւնը: Միաբաններէն ոմանք առիթ չէին փախցներ այդ օրուայ ուրուականի դէպքը վերլուծելով խնդալու: Տառապէթին ալ պատմեցի դէպքը եւ ան ալ կուշտ ու կուռ խնդաց:

ԺԱ.

Ամառնային երեք ամիսները լրանալու մօտ էին, վերջացուցած էի Հայկական դրամներու դասաւորութիւնը: Մասնաւոր կէս տպագիր, կէս ձեռագիր, նմանահանութիւններով միասին, Աբբաս-Տօր յանձնած էի երեք մեծղի հատորներու մէջ ամփոփուած այդ աշխատասիրութիւնս: Նոյն ատեն վանքի հայ նկարիչներու եւ տարագններու սրահին մէջ, ցուցադրութեան դրի, կային ապակէ կրկնակ փեղ կերու տակ, Հայ թագաւորներու դրամներէն նմոշներ նաեւ հայկական մետալներ – չքաղրամներ –: Այս դրամներու թիւը այդ ժամանակ կ'անցնէին աւելի քան 4000-ը, այսօր այդ թիւը կրկնապատկուած ըլլալու է: Վանքը ունի նաեւ ոչ հայկական դրամներու տասնեակ հազարաւոր օրինակներ:

Մեկնումէս օր մը առաջ, Միաբանութիւնը հրատարակեց ինծի ի պատիւ, ուր դրուատալից ելոյթներով խօսեցան վանականները ու կենաց բաժակներ պարպուեցան: Ոստեցաւ նաեւ Աբբասայրը ու ըսաւ. «Նախ ձեռքդ դաւար եւ բարի ճանապարհ ու յաջողութիւն կը մաղթեմ յառաջիկայի բոլոր քայլերուդ համար: Փարիզ վերադարձիդ՝ կը յուսամ լաւ բաներ կը պատմես միաբանութեանս մասին»: Իմ կարգիս խօսք առնելով ըսի. «Շնորհակալութիւն բոլորիդ հայրական այն հոգածութեան համար, զոր ցոյց տուիք ինծի: Ինքզինքս օր մ'իսկ օտար չգրագի ձեր մէջ: Ամէն միաբան, տարեց թէ երիտասարդ, զօրավիզ հանդիսացան եւ օժանդակեցին գործիս: Պատասխանելով Աբբասօր, պիտի ըսեմ որ երբ Փարիզ հասնիմ, դրուատալից բառերով վեր պիտի առնեմ Միաբանութեանը ազգայն գործունէութիւնը, աշխարհահռչակ Մատենադարանն եւ աշխարհահռչակ հայկական եւ այլ դրամներու հաւաքածոները, հարիւրամեայ ՀԱՆԻԷՍ ԱՄՄՕՐԵԱԾ Հայագիտական անաթիթը, եւ անոր արդիւնք աննման նոյնպէս մատենաւարը եւ այլն եւ այլն: Հուսկ ուրեմն պիտի գովեմ Միաբանութեանը Բաթ-Էնթ-այխարհահռչակ Միւնիսթրիոն լիքէօր-քաղցօղին, որ բազմաթիւ միջազգային ցուցահանդէսութեանց մէջ միշտ արժանացած է բազմաթիւ առաջին կարգի ոսկեայ մետալներու: Այսպէս պետական սովորութիւնն է որ երբ պէտք ըլլայ յիշատակի նուէրներ տալ օտար բարձրատիճան հիւրերու, պարտ է անպայման տրուած նուէրներու շարքին աւելցնել նաեւ Միւնիսթրիոն քաղցօղին: Արդ, այսքան ներբողելէ ետք այդ լիքէօրը եթէ հարցնողներ գտնուին թէ ինչպէս կարելի է այդ խմբիցը ձեռք ձգել, այդպիսիներուն պիտի պատասխանեմ՝ «Էշաքիթն» ունենալու համար անպայման պէտք է գրել Վիեննայի Հայոց Լուսաւորչականներու

Առաջնորդարանի վարդապետին, իսկ ապապրանքները ստանալու համար հարկ է հասցեագրել Վիեննա, Միւնիսթրիոններու փողոց, թիւ 1070, Տէրադըման Միւնիսթրիոն պահածոներու կեդրոն»:

Աբբասայրը կուսկելով մեր ունեցած հարցադրոյցները, քթի տակէն խնդաց: Երիտասարդ վարդապետ մը, խօսք առնելով եւ հիւստիով ըսաւ. «Պարոն Պերճ, դուն մեր վանքը կը բնակիս երեք ամիս միայն, եւ կը դժգոհիս որ տեսած չես Միւնիսթրիոնի շէջ մը: Հապա ինչ՞ ըսեմք մենք որ մեր ուսանողութեան ու վարդապետութեան ընթացքին, այդ խմբիքին ոչ հտուր եւ ոչ համը ինչ տեսակ ըլլալը չենք իմացած»:

Պատասխանեցի՝ ըսելով, որ մերինը պարզ կատակ մըն է եւ թէ կարգապահութիւնը շատ լաւ ունակութիւն մըն է:

Յաջորդ օր Աբբասայրը կանուխէն սենեակս եկաւ բարի ճանապարհ մաղթելու եւ սեղանիս վրայ դրաւ պահարան մը: Վերադարձի շոքեկաւոր տոմսակն էր եւ տրձակ մը տեղական դրամ: Շնորհակալութիւն յայտնելով ձեռքը համբուրեցի, ընդունեցի տոմսակի, սակայն մերժեցի նիւթական վարձատրութիւնը:

Պէտք է աւելցնեմ, որ մեծաւորը ինչպէս սովորութիւն էր որ իրեն բաժին ինկած անուշէղէնները կամ միւրքը թուղթի մը մէջ փաթաթած սենեակս կը բերէր, ըսելով աշխատանքը ծանր է, պէտք է լաւ սնունդ առնես: Այս վերջի օրուայ հրատարակ, Աբբասայրը դարձեալ չէր մոռցած իր միրգերու ծրարը:

Կապած էի իրեղէններս, գիրքերս ու դասաւորած ձեռագիրները եւ հրատարակեցի ինքնուրուագի, վանքի ծերունի տնտես վարդապետի առաջնորդութեամբ, իրիկուայ մօտ, դիմեցինք Փարիզ ուղղուող շոքեկաւոր հսկայական կայարանը: Թուս քննիչ ոստիկան մը քննեց ծրարներու պարունակութիւնը ու կնքեց զանոնք:

Վարդապետը վանքէն ելած ժամանակ ուսէն կախած էր կերպասեայ փոքրիկ պայուսակ մը: Կատաչարը մի քանի անգամ երկար սուղոցներ արձակեց եւ սկսաւ կամաց կամաց շարժիլ: Միեւնոյն ժամանակ մեր ալեհեր վարդապետը ուսէն հանեց խնդրոյ առարկայ պայուսակը եւ ինծի երկարեց: Միեւնոյն ժամանակ բարի ճանապարհ ու յաջողութիւն մաղթելով, աւելցնելով նաեւ՝ Աբբասայրը իր կողմէ բարի ճանապարհ ու յաջողութիւն կը մաղթէ, եւ այս պայուսակը կը դրկէ որ ձեզի յանձնեմ: Զեր ճանապարհի սնունդի պաշարն է՛, ինչպէս նաեւ փոքրիկ նուէր մը վանքէն:

Ճանապարհի կիսուն բացի ծրարը ու մէջը գտայ թուղթի մէջ փաթաթուած մեծ շէջ մը Միւնիսթրիոն, որուն վրայ գրուած այցագարթի մը վրան՝ ԱՆՈՒՇ ԹՈՂ ԸԼԼԱՅ:

ՅԱՐԳԱՆՔ ԱՌԺԱՆԱՒՈՐԱՑ

Մեր այս Վիեննական յուշերը թերի մնացած պիտի ըլլային, եթէ մեր յարգանքի տուրքը չվճարէինք այն բազմերախտ Մեծաւորին, որ տասնամեակներով հիմնական սիւնը եղած է Վիեննայի Միւնիսթրիոն Միաբանութեան: Անկախ իր Հոգեւորականի կոչումէն, եղած է ազգասէր, բարեսէր, մարդասէր եւ աննկուն շինող:

20-րդ դարու երկրորդ կիսուն՝ աստուածային շնորհներ ունեցող հովանաւորներ ունեցեր են մեր երեք գլխաւոր հոգեւոր հաստատութիւնները. Անթիլիասի կաթողիկոսութիւնը, յանձինս Տ. Տ. Գարեգին Ա. Յովսէփեան կաթողիկոսին, Վենետիկ-Ս. Լազարու վանք, յանձինս Գեղ. Սրապիոն Աբբասայր Ուլուհոճեանի եւ Վիեննայի Աբբասայր Գեղայ. Մեսրոպ Հապոգեանի, որոնք իրենց հոգեւոր, մշակութային, ազգային, շինարարական մարդերով եղած են մէջ մէկ ՄԱՄԻՄԵԱՆ բերեղեայ գաղթիներ:

Վիեննայի պարագային, Աբբասայր Հապոգեան եղաւ վանքին լաւ ու գէշ օրերուն միակ պատասխանատուն, որու վերջի շրջանին վանքը հիմէն ցնցուեցաւ, եկեղեցին, տպարանը եւ յարակից շինութիւնները վնասուեցան, կղերանոցը գոցուեցաւ եւ այլն:

Վիեննայի վանքը անբախտ եղած է իր աշխարհազարկան դիրքով ալ: Եթէ Ս. Լազարու կղզին տարուայ բոլոր շրջաններուն կ'ունենայ հայ եւ օտար բազմահազար այցելութիւններ եւ նաեւ ուխտաւորներ, քանի հայեր կ'այցելեն Վիեննայի Միւնիսթրիոններու վանքը: Ես անձամբ քանիցս ներկայ եղած եմ բազմամարդ խալաքի ուխտաւորներու, որոնք նաւակներով ուխտի կու գային Ս.

Ղազարու կղզին, երանաչնորհ եւ անմահն Սեբաստացի Մխիթարին գերեզմանին, կ'աղօթէին, կ'երգէին եւ նուէրներ տալով վանքին ու թեթեւցած սիրտերով կը հեռանային այդ սրբազան կղզեակէն, կը հեռանային Իտալացի ժողովուրդէն արդէն իսկ սրբացուած Մեծն Բատրէ Արմենօյի գերեզմանէն:

Կենսագրական

Գերազ. Մեսրոպ Հապոզեան ծնած է Տայոց լեռնաշխարհի Խոտորջրոյ Խանդածոր թաղին մէջ, 1887 թ.ին: Աշխարհական անունը եղած է Եփրեմ, փաղաքշական անունով՝ Երեմիա:

Կանուխէն կը կորսնցնէ իր մայրը: 11 տարեկանին կը մեկնի Վիեննայի վանքը: 1911 թ.ին Գովրիկեան Աբբասօր ձեռքով կը ձեռնադրուի քահանայ:

Փոխն ի փոխ եղած է ուսուցիչ, փոխ տնօրէն, եկեղեցապան, մատակարար եւ այլ պաշտօններ: 1920 եւ 1926 թուականներուն կ'ընտրուի վանքի կեդրոնական վարչութեան անդամ: 1931 թ.ին գումարուած ժողովին, քուէներու մեծամասնութեամբ, երջանկայիշատակ Գրիգոր Գովրիկեանի յաջորդ կ'ընտրուի Աբբասայր: 1942 Մայիսին ՊԻՈՍ ԺԲ. քահանայապետէն կ'ընտրուի ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՄԱՆՈՒ եւ նոյն տարուայ մէջ կը ստանայ օծումը:

Կարեւոր է հաստատել, որ Առաջին Ընդհանուր Պատերազմին որպէս հետեւանք, վանքը տնտեսապէս քայքայուած էր, սակայն Հապոզեան ոգի ի բոլոր ճգնելով կը վերակենդանացնէ իրեն յանձնուած միաբանութիւնը:

Վանքէն դուրս 1934 թ.ին՝ հոգեւոր կայան մը կը հաստատէ Պուտաբեշտի մէջ հոգ-հոգուցի համար: 1935 թ.ին վարժարան մը կը բանայ Գահիրէ: 1939 թ.ին վարժարան մը կը բանայ Պէյրութի մէջ:

1939 թ.ին Ամերիկա Վաթէրթաունի մէջ կը հաստատէ հոգեւոր կայան մը: 1938 թ.ի Աւստրիոյ մէջ տեղի ունեցած վարչաձեւին փոփոխութեան պատճառաւ կը վնասուի հոգեւոր դաստիարակութեան գործը:

1941 թ.ի՝ կառավարութիւնը, նման ուրիշ վարժարաններու, կը փակէ նաեւ վանքին ընծայարանը, որ կը տեւէ աւելի քան տասը տարի:

1944 Սեպտ. 10-ին ահազանգ կը հնչէ եւ վանքը հիմէն կը շարժի եւ բոլոր ապակիները ջարդ ու փշուր կ'ըլլան: Վիեննայի գրաւման ժամանակ, 1945 Ապրիլ 7-ին, կը վնասուի եկեղեցին: Իսկ Ապրիլ 9-ին՝ թնդանօթի ռումբերու հարուածներով ծանրապէս կը վնասուի տպարանը: Այս աղէտներուն կը հետեւի Աւստրիական դրամի արժէքազրկումը:

Այս բոլորը խաչեր էին Հապոզեան Աբբասօր փշոտ ճանապարհին, որ համակերպութեամբ կը տանի: Հապոզեան Աբբասօր ամենամեծ մխիթարութիւնը եղաւ այն, որ թագստոցներու մէջ պահուած պատմական ձեռագիրները, անեղծ եւ անվնաս կրկին կը բերուին ի լոյս աշխարհ ու կը տեղաւորուին իրենց պատուոյ տեղերը:

Այսպիսով, շնորհիւ այս անվեհեր հոգեւորականին, վանքը կը վերակենդանանայ, տպարանը կը վերանորոգուի, եկեղեցին կը բարեգարդուի: Տպարանը նոյնիսկ կը ստանայ նոր տողաշար: Արտասահմանի վարձու շէնքերու մէջ, սկսած վարժարաններէն՝ Պովրիկի, Պէյրութի եւ Հելիոպոլսոյ, արդիական եւ սեպհական շէնքերով եւ Կ. Պոլսոյ վարժարանը նոր յարկաբաժիններով կ'օժտուին: Այս բոլորը կը կատարուին անհաւատալի արագութեամբ եւ Հապոզեանի ձեռնբեղութեամբ: Ասով չեն վերջանար սակայն երախտաշատ Աբբասօր գործերը: Ան շատ հոգ կը տանէր ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ գոյատեւման: Այնտեղ լոյս կ'ընծայէ յօդուածներ եւ թարգմանութիւններ: Իր կարեւոր թարգմանութիւններն են Փրօֆ. Յ. Մարկուարտի ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՃԻՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ եւ ՎՐԱԿԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԾԱԳՈՒՄԸ:

Ըմբռնելու համար Մարկուարտի կարեւորութիւնը հայագիտութեան մարզէն ներս, պէտք է ըսել որ այդ գիտնականը եղած է բացառիկ պատմաբան լեզուագէտ եւ քաջամուտ մեր լեզուի ծագման, կազմաւորման եւ ունեցած առանձնայատկութեանց վերաբերեալ իր ունեցած ծանօթութիւնը աւելի հարուստ է մինչեւ իսկ շարք մը հայ լեզուագէտներու ունեցած պաշարէն:

Եղած է հայ դատի հաւատաւոր եւ անկաշատ պաշտպանը: Ահա թէ ինչ գրած է 1919 թուին. «Մարդկային իրաւունքներու գիտակցութիւնը ունեցող բոլոր ժողովուրդներն ու պետութիւնները, պատուոյ պարտականութիւնը պէտք է ունենան այս ջանասէր եւ բարձր ընդունակութիւններով օժտուած ժողովուրդին համար մարդավայել գոյութեան պայմաններ ստեղծել եւ երաշխաւորել »:

Մարկուարտ մեծ սիրով կապուած ըլլալով մեր ժողովուրդին եւ անոր մշակոյթին ու հերոսական անցեալին, որ 1928-ական թուականներուն կ'որոշէ վերջնականապէս հաստատուիլ Հայաստան, ինքզինք ամբողջութեամբ նուիրելու հայագիտութեան: Մինչեւ իսկ ինքզինքը կը կնքէ նոր հայկական անունով՝ Ժոզէֆ Մարկուարտ դարձնելով՝ Յովսէփ Բոքշիսեանի - բոքշիսեան - Սակայն քաղաքական պատճառներով չի կրնար իրագործել իր երազը (Մարգիս Աւագ քհն. Անդրէասեան, ՀԱՅՐԵՆԻՔ ՕՐԱԹԵՐԹ, 1984, Փետր. 25):

Ահա թէ ինչպիսի հայագիտութեան ներդրում-կատարած էր իր վերոյիշեալ թարգմանութիւններով:

Այս բոլորէն զատ Աբբասայրը կարգ ու կանոնի սիրահար մըն էր եւ այդ կարգապահութեամբ ազանուէր սերունդ մը հասցուց: Արդ, այդ ինչպիսի աստուածաշնորհ կամք էր որ նման անպատմելի պայմաններու տակ կարողացաւ՝ ոչ միայն վերականգնել փճացածն ու ոչինչէն սկսիլ ամէն բան եւ վերականգնել գանոնք: Թող այս ըլլայ անոր ինչպիսի շիրմին վրայ դրուած ծաղկեփունջ մը, ըլլայ որպէս՝ ՏէՐ ՈՂՈՐՄԻ:

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ